ՀՀ ՆԳՆ ՄՔԾ պետի տեղակալ

Մ․Գևորգյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ քաղաքացիության բաժնի փորձագետի կողմից

կատարված աշխատանքների վերաբերյալ

(01.09.2024-30.12.2024թթ․)

2024 թվականի Սեպտեմբերի 1-ից 2024 թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ քաղաքացիության բաժնի գլխավոր փորձագետ՝ Ռոզա Ռուբենի Սարգսյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. ուսումնասիրել եմ ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ դիմումները, այդ թվում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկված, ստուգել եմ փաստաթղթերի ամբողջականությունը, ՀՀ օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերի՝ օտար լեզվով կազմված լինելու դեպքում նաև դրանց՝ սահմանված կարգով կազմված, հաստատված և թարգմանությունների հայերեն վավերացված լինելը, գործի հետագա ընթացքը շարունակելու նպատակով․
2. աջակցել եմ ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ գործերի կազմելու և վարելու աշխատանքներին․
3. տրամադրել եմ խորհրդատվություն, պարզաբանել եմ անձի քաղաքացիություն ստանալու, դադարեցնելու կարգի, անհրաժեշտ փաստաթղթերի, ժամկետների, ընթացակարգերի վերաբերյալ, անձի դիմումի հիման վրա տվել եմ պարզաբանումներ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու գործերում առկա՝ գաղտնիք չկազմող տեղեկությունների, դիմումը բավարարելու կամ մերժելու իրավական հիմքերի վերաբերյալ․
4. ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու դիմումների վերաբերյալ կատարել եմ հարցումներ, կազմել եզրակացություններ․
5. համապատասխան էլեկտրոնային համակարգ մուտքագրել եմ ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ փաստաթղթերը, դիմումատուի համար էլեկտրոնային շտեմարանի միջոցով ձևավորել և նրան տրամադրել եմ դիմում-

հարցաթերթիկում նրա կողմից լրացված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել եմ անհատական ծանկագիրը․

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ քաղաքացիության

բաժնի փորձագետ՝ ---------------------------------------

Ռ.Սարգսյան

<<--09->>--հունվարի--2025թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները

գնահատում եմ <<--գերազանց-------------->>

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ պետի տեղակալ Մ.Գևորգյան ---------------

-----------------------

<<--09-->>----01-------------2025թ.